ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռ. Զ. ՋԻՋՅԱՆ, Տիեզերքի մասին գիտության փիլիսոփայական և մեթոդաբանական պրոբլեմներ, Երևան, «Հայաստան» 1983, 176 էջ (ռուսերեն)

Փիլիսոփայական մտքի առաջընթացի կարևոր աղբյուրներից մեկը բնագիտական նոր գիտելիքի, հայտնագործությունների, տեսական ըմբռնումների փիլիսոփայական իմաստավորումն է, դրանց մեկնաբանումն ու ընդհանրացումը։ Այս առումով առանձնապես արդյունավետ ու հետաքրքիր է աստղագիտական խնդիրների, տիեզերաբանական ըմբռնումների փիլիսոփայական վերլուծությունը, քանզի դրանք անմիջականորեն աղերսվում են աշխարհի գիտական պատկերի, գիտական աշխարհայացքի ձևավորմանը։ Հասկանալի է, բնականաբար, որ այս բնագավառի ամեն մի գիտական հետազոտություն դառնում է ուշադրության առարկա, մանավանդ եթե նկատի ունենանք, որ աստղագիտությունը, Տիեզերքի մասին գիտությունն առհասարակ, Սովետական Հայաստանի առավել առաջադիմող և ճանաչում ստացած գիտական բնագավառն է։ Ռ. Զ. Ջիջյանի մենագրությունը, որ նվիրված է տիեզերագիտական զանազան արդիական ըմբռնումների մեթոդաբանական վերլուծությանը, ուշագրավ հետազոտություն է ընդգրկված հարցադրումների շրջանակով։ Թեմայի ընտրությունը հավանաբար պայմանավորված է նաև Ռ. Ջիջյանի «անցյալով» և «ներկայով». նա կրկնությամբ ֆիզիկոս է, սովորել է ֆիզիկայի գծով ասպիրանտուրայում, իսկ վերջին տարիներին զբաղվել է գիտական հետազոտության մեթոդաբանության հարցերով։

Ռ. Ջիջյանի մենագրության կառուցվածքն ունի իր տրամաբանությունը՝ նախ քննարկվում է մարքսիստական փիլիսոփայության որպես ժամանակակից բնագիտության մեթոդաբանության հարցը) գլուխ I), ապա շարադրվում են աստղերի և գալակտիկաների էվոլյուցիայի հիմնական ըմբռնումները՝ դասական, ոչ դասական (բյուրականյան) (գլուխ II)։ Երրորդ գլուխն անմիջականորեն նվիրված է Տիեզերքի մասին գիտության մեթոդաբանական հարցերին։

Առաջին գլխի հիմնական նպատակն է պարզել, թե ո՞րն է մատերիալիստական դիալեկտիկայի մեթոդաբանական ֆունկցիայի իրագործման ֆունկցիան։ Այդ նպատակով նախ քննարկվում է բնագիտական գիտելիքի զարգացման ընդհանուր ուղին։ Որպես էլեկտրային վիճակ դիտարկվում է այն փուլը, երբ առկա տեսությունը հիմնականում բավարարում է նրան ներկայացվող պահանջները, և հետազոտությունները ծավալվում են տեսության հիմնարար սկզբունքներն ու մեթոդները նոր պրոբլեմների և բնագավառների շրջանակում տարածելու եղանակով, այսինքն տեղի է ունենում տեսության «էքստենսիվ» զարգացումը։ Սակայն, վերջ ի վերջո, հայտնի են դառնում այնպիսի նոր փաստեր, փորձնական տվյալներ, որոնք ոչ մի կերպ չի հաջողվում «հարմարեցնել» հին տեսությանը, այն հայտնվում է «ճգնաժամային» վիճակում, որի հաղթահարումը պահանջում է սկզբունքային նոր գաղափարների ներմուծում, էապես նոր տեսության

մշակում։ Տեղի է ունենում բնագիտական տեսության թռիչքային առաջընթաց, գիտական հեղափոխություն։ Եվ ինչպես վկայում է բնագիտության զարգացման պատմությունը, հենց գիտական տեսությունների ճգնաժամերի և հեղափոխական տեղաշարժերի փուլերում է հատկապես ցայտուն ձևով դրսևորվում փիլիսոփայական սկզբունքների ու օրենքների կարևոր մեթոդաբանական դերը։

Փիլիսոփայական գիտելիքի մեթոդաբանական ֆունկցիայի իրագործման մեխանիզմում հեղինակն առաջին թերթին նշում է փիլիսոփայական կատեգորիաների, օրենքների ու սկզբունքների հիմնարար նշանակությունը աշխարհի գիտական պատկերի ձևավորման գործում։ Հենց աշխարհի պատկերի միջոցով են գիտնականները հաճախ յուրացնում դիալեկտիկայի ու մատերիալիզմի սկզբունքները։ Իր հերթին սկզբունքային նոր բնագիտական հայտնագործություններն էապես նպաստում են աշխարհի գիտական պատկերի վերակառուցմանը, փիլիսոփայական գիտելիքների խորացմանը և զարգացմանը։

Փիլիսոփայությունը, մատերիալիստական դիալեկտիկան չեն հավակնում առաջարկել բոլոր գիտական պրոբլեմների լուծման միակ և համընդհանուր մեթոդ։ Սակայն, ինչպես ընդգծում է հեղինակը, դիալեկտիկական մատերիալիզմն է, որ ապահովում է բնագիտական հետազոտությունների առավել արդյունավետ եղանակը և հեռանկարային ուղին։

Երկրորդ գլուխը սկսվում է արեգակնային համակարգի առաջացման ու զարգացման հիմնական ուսմունքների չարադրանքով ու քննարկումով։ Նույնպես հանգամանորեն լուսաբանված են աստղերի էվոլյուցիայի դասական կոնդենսացիոն ըմբռնումը և գերխիտ նախաաստղային նյութի ոչ-դասական (բյուրականյան) տեսությունը։ Հատկապես հաջող է ներկայացված գալակտիկաների կորիզների տիեզերագիտական ակտիվության դաղափարի առաջացման ու զարգացման պատմությունը։ Այդ գաղափարի շնորհիվ գալակտիկաների աշխարհը, որը թերևս ամենակայունն է համարվում մարդկության հայտնի օբյեկտների համակարգում, այժմ դիտարկվում է որպես դինամիկ, հսկայական էներգիա ունեցող և արտանետող դանգվածներ։ Գալակտիկաների կորիզների ակտիվության՝ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի գաղափարն այնպիսի սկզբունքային դեր խաղաց տիեզերագիտության հետագա զարգացման պատմության մեջ, որ այն իրավամբ որակվել է որպես նոր Կոպեռնիկոսյան հեղափոխություն աստղագիտությունում։

Գլխի վերջին պարագրաֆը նվիրված է ժամանակակից ռելյատիվիստական տիեզերագիտական մոդելների քննարկմանը։ Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է այն աստղագիտական փաստերը և տեսական ըմբռնումները, որոնք հիմք տվեցին Տիեզերքի «փակ» (ավելի ստույգ՝ տարածության մեջ վերջավոր, բայց անսահման) պատկերացումների առաջադրմանը։

Ինչպես ասվեց, մենագրության կորիզը նրա երրորդ գլուխն է, որտեղ քննարկվում են ժամանակակից տիեզերագիտության մի շարք հրատապ փիլիսոփայական և մեթոդաբանական հարցեր. դիտական տիեզերագիտության ընդհանուր սկզբունքները, հիպոթեզների դերը տիեզերագիտական հետազոտություններում, ֆիզիկական գիտելիքների մակարդակի աղբյուրները տիեզերագիտական գիտելիքի զարգացման ընթացքի վրա, «անսովոր» ու «արտառոց» տիեզերագիտական ըմբռնումների մատերիալիստական մեկնաբանման խնդիրը, Տիեզերքի անվերջության պրոբլեմը։

Մենագրությունում հատկապես ուշագրավ է Տիեզերքի ռելյատիվիստական տիեզերագիտական մոդելներից բխող հետևությունների փիլիսոփայական իրավակացության հարցը։ Հեղինակն այս առիթով նախ ընդգծում է, որ արդարացված չեն սովետական որոշ մեթոդաբանների փորձերը մեղմացնելու այն սուր հատկությունները, որոնք առաջանում

են տիեզերագիտական մոդելներից բխեցվող հետևությունների և ընդունված մատերիալիստական սկզբունքների միջև։

Այդ հակասությունները առաջանում են գլխավորապես աշխարհի (Տիեզերքի) տարածական և ժամանակային բնութագրերի կապակցությամբ։ Դիալեկտիկական մատերիալիզմի դասականները բազմիցս ընդգծել են աշխարհի անվերջությունը ժամանակի առումով, նրա անեղծելիությունը և հավիտենականությունը, որի հետ էլ անմիջականորեն կապված է նաև աշխարհի տարածական անվերջության սկզբունքը։ Իսկ ռելյատիվիստական տիեզերագիտությունում տիեզերական նյութի միջին խտության որոշ կրիտիկական մեծությունից ավել լինելու դեպքում համաշխարհային (տիեզերական) տարածությունը վերջավոր է։ Ինչ վերաբերում է Տիեզերքի ժամանակային բնութագրին, ապա այստեղ վիճակը դեռևս բարդ է։ Ընդլայնվող Տիեզերքի բոլոր տիեզերագիտական մոդելներում անհրաժեշտաբար ենթադրվում է (ավելի ճիշտ՝ հետևում է), այսպես կոչված «սինգուլյարություն», «դրո-պան», որին չափազանց դժվար է տալ այլ մեկնաբանություն, քան թե «աշխարհի սկիզբ», տիեզերական ժամանակի սկիզբ։

Հետաքրքրական է նաև մենագրությունում Տիեզերքի անվերջության հարաբերական բնույթի Ա. Լ. Զելմանովի գաղափարի քննարկումը։ Ռ. Ջիջյանը այստեղ ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ նշված գաղափարը հիմնվում է որոշ վիճելի ենթադրությունների վրա, և այդ պատճառով դեռևս չի կարելի պնդել աշխարհի տարածամանակային անվերջության բնութագրի հարաբերականությունը։

Ընդհանուր առմամբ Ռ. Ջիջյանի մենագրությունը գրված է գիտական բարձր մակարդակով։ Եվ հենց այսպիսի աշխատության ընթերցումից հետո են առաջանում զանազան ցանկություններ, առաջարկություններ։ Մասնավորապես անհրաժեշտ են համարում նշել բնագիտության փիլիսոփայական պրոբլեմներին նվիրված աշխատությունների հաղվադեպությունը և այս տեսակետից անդրադառնալով ընկ. Ջիջյանի աշխատությանը պահանջ է առաջանում հեղինակին մեղադրել հակիրճության մեջ, թեև իհարկե նա եղած բացը շատ լանով լրացրել է։ Նշելով կատարված դրական աշխատանքը, կարծում ենք, որ բնագիտության և փիլիսոփայության փոխհարաբերության որոշ հանգուցային հարցեր (շեշտելով տիեզերագիտությունը) կարելի էր ավելի հանգամանորեն արծարծել։ Մեր կարծիքով թերի են լուսաբանված բյուրականյան ուղղության հակադիր ուղղությունները, որոնց քննարկումն անպայմանորեն առնչվում է մեթոդաբանական հարցերին։ Հեղինակին այս պարագան ավելի լայն հնարավորություններ կընձեռներ և ավելի կդյուրացներ իր համակրանքը հանդեպ բյուրականյան ուղղության արտահայտելու համար։ Մենագրությունում առաջադրվել են բազմաթիվ դրույթներ, կարծիքներ (օրինակ գիտնականների անհատական ստեղծագործության դերը), որոնց կարելի է հակադրվել, բանավիճել, սակայն իհարկե ոչ այստեղ։ Հարկ ենք համարում նշել, որ մենագրությունը իր թերություններով հանդերձ, թողնում է դրական տպավորություն և կարող է բավարարել ամենախիստ ընթերցողի պահանջները։

Վ. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ